

<<Ջուր և առողջություն>>

Արձանագրության շրջանակում
ազգային թիրախների նախնական
արդյունքները

Վիլիկ Սարգսյան

Փորձագետ

Երևան, 6 մայիսի, 2014

Ելակետային իրավիճակի վերլուծություն

Նախնական վերլուծությունը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ
- Ինստիտուցիոնալ շրջանակները
- Ֆինանսական շրջանակները
- Ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները

I - Մատակարարվող խմելու ջրի որակը

- Ջրամատակարարման տնտեսությունը որոշ տարածքներում շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա և բնութագրվում է տարածքային զգալի անհամաչափություններով:
- Լուրջ հիմնախնդիր է գյուղական բնակավայրերում ջրամատակարարվող ջրի որակի և անվտանգության ապահովումը:

Առաջարկվող թիրախներ

- Բարելավել հատկապես գյուղական բնակավայրերում ջրամատակարարվող ջրի որակի և անվտանգության ապահովումը՝ ջրամատակարարման համակարգերի արդիականացման և որակի ապահովման ուղղությամբ միջոցառումների իրականացման միջոցով (2020թ.):
- «Ջրի անվտանգության ծրագիր»-ների մշակում և իրականացում ջրամատակարար կազմակերպությունների կողմից (2020թ.):

II - Ջրի հետ կապված բռնկումների և հիվանդությունների կրճատում

- Հանրապետությունում ժամանակ առ ժամանակ առաջանում են բռնկումներ, որոնք չեն վերածվում համաճարակի:
- Հիմնականում արձանագրվում են աղիքային վարակների բռնկումներ՝ պայմանավորված ջրային (հիմնականում՝ ջրմուղ-կոյուղու ցանցում պարբերաբար առաջացող վթարներ) և սննդային գործոններով:

Առաջարկվող թիրախներ

- Պահպանել խոլերայի և որովայնային տիֆի և վիրուսային հեպատիտ Ա-ի ջրով պայմանավորված դեպքերի , բռնկումների և համաճարակների բացակայությունը
- Ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների դեպքերի կամ բռնկումների առաջացման հնարավոր պատճառները բացառելու նպատակով ջրամատակարարման համակարգերի արդիականացմանը և բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացում և նոր ծրագրերի մշակում (շարունակական, 2020թ.)

III – Ջրի մատչելիությունը

- Հայաստանը հարուստ է բարձրորակ ջրի ստորերկրյա աղբյուրներով:
- 250 քաղաքային և գյուղական համայնքներ (200000 բնակիչ) ջուր է ստանում մակերևութային ջրաղբյուրներից:
- Խմելու ջրի մաքրման կայանները գտնվում են ամխիթար վիճակում և ջրի որակը ցածր է:
- Խաթարված են ջրի մաքրման տեխնոլոգիական գործընթացները և չի ապահովվում խմելու ջրի ստանդարտներին համապատասխան ջուր:

Առաջարկվող թիրախներ

- <<Խմելու ջրի մասին>> ՀՀ Օրենքի ընդունում (2016թ.):
- Խմելու ջրի մաքրման ներկայումս չգործող 5, կայանների վերականգնում (2014-2018 թթ.)
- Անմիջապես մակերևութային ջրերից, առանց մաքրման ջրամատակարարման համար ներկայումս օգտվող 5 բնակավայրերում նոր մաքրման կայանների կառուցում (2015-2019 թթ.)

Առաջարկվող թիրախներ

- Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ցանցի նախագծերի կազմում և կառուցում (2016 թ.-ին՝ մինչև 15 գյուղական բնակավայր, 2020 թ. –ին՝ մինչև 35 գյուղական բնակավայր)
- Գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգերի բազայի վրա խոշոր բնակավայրերում ջրամատակարարման ցանցի շրջանացման իրականացում (մինչև 2 բնակավայր 2016 թ.-ին, մինչև 5 բնակավայր 2020 թ.-ին)

Առաջարկվող թիրախներ

- Ջրամատակարար միջազգային օպերատորների կողմից 560 չսպասարկվող գյուղական համայնքներից բնակչությանը հասանելի և որակյալ խմելու ջրով ապահովումը (2015 թ.-ին՝ մինչև 10 գյուղի բնակչությանը, 2020 թ.-ին՝ մինչև 50 գյուղի բնակչությանը)
- Ջրամատակարար միջազգային օպերատորների ջրամատակարարման համակարգերում սանիտարական գոտիների վերականգնում կամ նորերի կառուցում (2015 թ.-ին՝ մինչև 10 սանիտարական գոտի, 2020 թ.-ին՝ մինչև 30 սանիտարական գոտի)

Առաջարկվող թիրախներ

- Միջազգային օպերատորների սպասարկման ջրամատակարարման համակարգերում ջրի կորստի մակարդակի նվազեցում (2015 թ.-ին մինչև 5 %, 2017թ.-ին՝ մինչև 7 %, 2020 թ. -ին՝ մինչև 10 %)
- Մասնագիտական կադրերի վերապատրաստում ջրամատակարար միջազգային օպերատորների համակարգերում (2014 թ.-ին՝ մինչև 10, 2016 թ.-ին՝ մինչև 10, 2018 թ.-ին՝ մինչև 10, 2020 թ.-ին՝ մինչև 10 մարդ)

IV-Ջրահեռացման մատչելիություն

- Արդեն 20 տարուց ավել ջրահեռացման համակարգում բավարար շահագործման ու պահպանության ծախսեր չեն իրականացվել:
- Մաքրման կայանների բացակայությունը պատճառ է դարձել, որ բնակավայրերը վեր են աճել շրջակա միջավայրի խոշոր աղտոտողների:
- Բնակավայրերի կենցաղային, որոշ քաղաքներում նաև արտադրական, կեղտաջրերն առանց մաքրվելու լցվում են մակերևութային ջրային ռեսուրսներ:
- Շատ անմխիթար վիճակում են գտնվում գյուղական համայնքերի կրթական կառույցները:

Առաջարկվող թիրախներ

- Նոր կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում, ինչպես նաև ջրահեռացման ցանցերի բարելավում (2016թ. Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում, 2020թ. Ֆինանսական միջոցների առկայության դեպքում ևս երեք քաղաքներում)
- Երևանի <Աէրացիա> կեղտաջրերի մաքրման կայանի վերակառուցում և վերականգնում (2020թ.)
- Կենտրոնացված ջրահեռացման համակարգերի նորոգում և վերականգնում, ինչպես նաև նոր հատվածների կառուցում (2016թ. առնվազն 2 քաղաքներում, 2020թ. Ֆինանսական միջոցների առկայության դեպքում ևս 3 քաղաքներում)

Առաջարկվող թիրախներ

- Փոքր անհատական կամ կոլեկտիվ ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի կառուցում ջրահեռացման կենտրոնացված համակարգեր չունեցող բնակավայրերում (2016թ. մինչև 10 բնակավայրում, 2020թ. մինչև 50 բնակավայրում)

XIV - Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակը

- Չեն ապահովվում ջրամատակարարման կառույցների սանիտարական պահպանման գոտիները:
- Անբավարար է խմելու ջրի մաքրման և վարակազերծման սարքավորումների տեխնոլոգիական մակարդակը:
- Խմելու ջրի զգալի մասը դեռևս չի ենթարկվում շարունակական վարակազերծման, իսկ բաց ջրամբարների ջրի մաքրման կառույցներն արդիականացման կարիք ունեն:
- Ջրամատակարարման աղբյուրների II և III գոտիների սահմանագծերը որոշված չեն:

Առաջարկվող թիրախներ

- Ջրամատակարարման աղբյուրների և կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտիների սահմանների և ռեժիմի ապահովումը (2020թ.)
- Խմելու ջրի մաքրման և վարակազերծման ապահովում (2020թ.)
- Ջրամատակարարման աղբյուրների և կառույցների սանիտարական պահպանման երկրորդ և երրորդ գոտիների սահմանների և ռեժիմի ապահովումը (2020թ.)



Շնորհակալություն